ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հայոց լեզու և գրականություն

Թեմա՝ Համագործակցային ուսուցման կազմակերպումը հայոց լեզվի և գրականության դասերին

Կազմեց՝ Սիլվա Հակոբյան

<<Կապանի թիվ 10 միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ

Ղեկավար՝ Լուսինե Սողոմոնյան

Կապանի N2 ավագ դպրոց ՊՈԱԿ

Կապան 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.Ներածություն _____ 3

2.Համագործակցային ուսուցման կազմակերպումը _____ 4

3. Հետազոտական աշխատանքի կազմակերպումը ավագ

Դպրոցում

4. Եզրակացություն_____ 16

5. Գրականություն_____ 20

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Դասավանդման ավանդական ձևերը այլևս անկարող են ստեղծել ու զարգացնել գիտելիքներ ու հմտություններ, որոնք անհրաժեշտ են քաղաքացուն գիտելիքների տնտեսության մեջ բարեկեցիկ կյանքով ապրելու համար: Հետևաբար ինչպես Հայաստանում, այնպես էլ ամենուրեք, դպրոցում անհրաժեշտ են դասավանդման և ուսուցման այլընտրանքային նոր մոտեցումներ:

Դասավանդման խնդիրների լուծման նպատակով համագործակցային ուսուցումը ուսուցիչների կողմից փորձարկվող միջոցներից մեկն է: Չնայած իր տարածմանը ուսուցիչների շրջանում՝ այն չի գտել լայն կիրառում: Դրա պատճառն ամենևին սովորողների առաջընթացի և ընդհանուր զարգացման վրա համագործակցային ուսուցման դրական ազդեցության վկայությունների բացակայությունը չէ: Համագործակցային ուսուցումը ժամանակակից կրթության, դասավանդման և ուսուցման ամենաշատ ուսումնասիրված ոլորտներից մեկն է: Կարճ ասած՝ գիտելիքների հասարակությունում անհրաժեշտ գիտելիքների և հմտությունների ուսուցման վերաբերող հետազոտությունների արձագանքները բավական խոստումնալից են:

Խիստ կարևոր է իրարից տարբերել ավանդական խմբային աշխատանքը և համագործակցային ուսուցումը: ՈՒսուցիչներից շատերն են դասավանդման ընթացքում կիրառում խմբային աշխատանք, սակայն քչերն ունեն ուսուցման գործընթացում համագործակցային ուսուցման հիմնական տարրերն ու մեթոդները ինտեգրելու համար անհրաժեշտ վարպետություն: Հենց այդ պատճառով համագործակցային ուսուցումը քիչ է կիրառվում դասարանում և դպրոցում կիրառվող փոքր խմբերով աշխատանքները ավելի շատ խմբային աշխատանքներ են , քան համագործակցային ուսուցում: Համագործակցային ուսուցման կիրառումը սովորելը ժամանակատար գործընթաց է: ՈՒսուցիչներից պահանջվում է մեկ կամ երկամյա մասնագիտական

վերապատրաստում և ուսուցում: Այդ ժամանակահատվածում չափազանց կարևոր է դասարանում պարբերաբար կիրառել ուսուցման հմտությունները, ուսումնասիրել համագործակցային ուսուցման վերաբերյալ գրականություն, ինչպես նաև համագործակցել նմանատիպ գործընթացներում ներգրավված ուսուցիչների հետ: Հայաստանի դպրոցները ավելի շատ հիշեցնում են ուսուցիչների և սովորողների ավանդական համայնքներ: Ուստի համագործակցային ուսուցումը Հայաստանում ունի ներդրման ու զարգացման համար անհրաժեշտ հիմք և բարենպաստ պայմաններ:Անհրաժեշտ է,որ ուսուցիչը ստեղծի համապատասխան մթնոլորտ և պայմաններ:Նա պետք է այնպես կազմակերպի դասը,որ բոլոր աշակերտները ներգրավվեն ուսումնական գործընթացի մեջ:Նրանք,ովքեր իրենց ուժերին վստահ չեն,սկսելու են հավատալ իրենց կարողություններին և գրանցելու են հաջողություններ:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Համագործակցային ուսուցման ընթացքում կարևորվում է ոչ միայն ակադեմիական գիտելիքների և հմտությունների ձեքբերումը, այլև խմբային գործընթացի մշակման միջոցով հմուտ համագործակցողների /համագործակցային հմտություններ կիրառողներ/ և գիտելիքների ակտիվ կիրառողներ / մտածողության հմտություններ կիրառողներ/ ձևավորելը: Համագործակցային ուսուցումը մեծացնում է նաև սովորողների ինքնուրույնությունը և պատասխանատվությունը, և ուսման գործընթացը վերածվում է սոցիալական շփման: Գոյություն ունեն համագործակցային կրթության և ուսուցման բազմաթիվ մեթոդներ (նախագծերի մեթոդը, քննարկումը, խնդիրների լուծման վրա հիմնված և դիտարկման միջոցով իրականացվող ուսումը և այլն): Այս մեթոդներից յուրաքանչյուրի համար գոյություն ունեն համատեղ աշխատանքի տարատեսակ եղանակներ, վարժություններ և առաջարկություններ: Համագործակցային մեկ ճիշտ մեթոդ գոյություն չունի, սակայն կա համագործակցային մի քանի եղանակ, և ավելին՝ ներկայումս գոյություն ունեն հարյուրավոր վարժություններ և կազմակերպման եղանակներ: Համագործակցային մանկավարժության նպատակն այնպիսի մեթոդների կիրառումն է, որոնք առավել արդյունավետ կլինեն: Հետևաբար, ուսուցիչները կարող են

այս կամ այն մեթոդը որդեգրելու փոխարեն ընտրել տվյալ մանկավարժական իրավիճակին համապատասխանող լուծում, իսկ այլ իրավիճակում՝ կիրառել այլ լուծումներ: Ուսուցման ընթացքում խմբի յուրաքանչյուր անդամ կամ ամբողջ դասարանը ակտիվորեն ներգրավված են ուսուցման մեջ, իսկ նոր գիտելիքը մշակվում ու յուրացվում են հենց աշակերտների միջոցով:Առաջին հերթին ստեղծվում են համագործկցային խմբեր,որոնք կայուն ,երկարաժամկետ, տարասեռ /հետերոգեն/ խմբեր են, որոնց անշխատանքը տևում է ողջ դասընթացի կամ ծրագրի շրջանակներում:Այս խմբերի անդամները աջակցում, օգնում և խրախուսում են՝ նպաստելով առաջադրանքի կատամանը և գիտելիքների ձեռքբերմանը: Այն ներառում է բացակա ընկերներին աջակցելը, անցած նյութը բացատրելը, տնային հանձնարարությունները կատերելու հարցում օգնելը և այլն: Դրանք մշտական են և ապահովում են երկարաժամկետ, հոգատար, գործընկերային փոխհարաբերություններ: Խմբերը անց են կացնում պաշտոնական հանդիպումներ՝ յուրաքանչյուր անդամի ակադեմիական առաջընթացը քննարկելու, միմյանց աջակցություն և օգնություն տրամադրելու համար, ինչպես նաև համոզվելու, որ յուրաքանչյուր անդամ կատարում է հանձնարարությունները և ունի բավարար առաջընթաց ակադեմիական ծրագրի շրջանակներում: Ոչ պաշտոնապես անդամները համագործակցում են ամեն օր՝ դասերի ընթացքում և դասամիջոցներին, քննակում են հաձնարարությունները և օգնում միմյանց: Հենակետային խմբերն ունեն անձնական պատասխանատվություն՝ լսել և սատարել խմբի անդամին, երբ վերջինս ունի անձնական բնույթի խնդիրները: Որքան մեծ է դասարանը կամ դպրոցը և բարդ ու դժվարին առարկան, այնքան ավելի կարևոր է հենակետային խմբեր ունենալը: Բացի գիտելիք փոխանցելուց՝ ուսուցիչը նպատակ է հետապնդում զարգացնել աշակերտի՝ խնդիրներ լուծելու և համագործակցելու կարողությունները: Խնդիրների լուծման վրա հիմնված ուսման դեպքում աշակերտը պետք է ինքնուրույն հետազոտություն իրականացնի, կարողանա ըմբռնել խնդրի էությունը, ինչպես նաև ունենա SS ոլորտում որոշ գիտելիքներ: Ուսուցման այս մեթոդի նպատակներից է նաև նշված կարողությունների զարգացումը: Այս դեպքում ուսուցիչը կատարում է համակարգողի կամ խորհրդատուի դեր: Խնդիրների լուծման վրա հիմնված

ուսուցումն աշակերտներին սովորեցնում է, թե ինչպես է պետք սովորել: Աշակերտները սովորում են խմբի անդամների հետ համագործակցությամբ լուծումներ գտնել իրական կյանքից վերցված խնդիրների համար: Միաժամանակ նրանք սովորում են, թե ինչպես առավելագույնս արդյունավետ համակարգեն իրենց ուսման գործընթացը: Այս մեթոդի հիմնական իմաստն այն է, որ աշակերտի կարողություններն օգտագործվում են ոչ թե պատրաստի գիտելիք տրամադրելու, այլ գիտելիք քաղելու նպատակով: Այն դասարաններում, որտեղ աշակերտներն այս մեթոդն են կիրառում, նրանք հասկանում են, թե ինչպես է ուսումը դառնում գիտելիքի որոնման գործընթաց: Աշակերտների մոտ ձևավորվում է քննադատական մտածելակերպ, որն իրենց հնարավորություն է տալիս ձեռք բերվող տեղեկությունները փոխկապակցել այն նպատակի հետ, որի իրականացման համար կարող են օգտագործվել այդ տեղեկությունները: Խնդիրների լուծման և ուսման գործընթացի հաջողությունը կախված է աշակերտների դպրոցական և արտադպրոցական արդյունավետ աշխատանքից: Առաջադրանքների խմբային կատարումը խնայում է ժամանակը և զարգացնում է խմբի անդամների շփման հնարավորությունները:

Համագործակցային խմբերի ձևավորման եղանակները

Համագործակցային խմբերը կարող են ձևավորվել պատահականորեն կամ նպատակային:Դրանք կարող են լինել փոքր/2-4 աշակերտ/ և մեծ/5-6 աշակերտ/:

Խմբի յուրաքանչյուր անդամ ունենում է իր պարտականությունը:Օրինակ՝

-- քարտուղարը պատասխանատու է ճիշտ խոսքի համար

--ժամանակը հաշվառողը պատասխանատու է ժամանակային սահմանափակումներին հետևելու համար

--աշխատանքների կատարման պատասխանատուն ապահովում է բոլորի կողմից իրենց աշխատանքի պատշաճ կատարումն ու խմբում արդյունավետ հաղորդակցությունը

--խոսնակը պատասխանատու է ուսուցչի հետ կապ պահպանելու համար,զեկուցում է կատարված աշխատանքի մասին

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԱՎԱԳ ԴՊՐՈՑՈՒՄ

Հետազոտությունը որոշակի թեմայով կամ որոշակի երևույթի մասին տեղեկատվության հավաքագրման գործընթաց է:Ըստ Սթինհաուզի՝ հետազոտությունը համակարգված հարցադրումների ամբողջությունն է,որը հրապարակայնացվում է:

Աշխատանքը կազմակերպել եմ 10-րդ դասարանում:Թեման «5-րդ դարի հայ մատենագրություն»-ն է: Աշխատանքին հատկացրել եմ 10 դասաժամ:

Պատմագրության ուսումնասիրության մեթոդները ենթարկվել և պարբերաբար ենթարկվում են փոփոխությունների,ինչը պայմանավորված է պատմագիտության ուսումնասիրման մեթոդաբանության ճգնաժամով,պատմագիտության շրջանակների ընդլայնումով,ժամանակակից գիտական աշխարհի մարտահրավերներով:Ուստի այս հետազոտության նպատակն է՝

1.վեր հանել հայ պատմագրության դերը հայոց արժեհամակարգի ձևավորման,պահպանման ու փոխանցման գործում

2.ամբողջական պատկերացում տալ հայ մատենագրության սկզբնավորման և զարգացման փուլերի վերաբերյալ

3.ներկայացնել Ոսկեդարի պատմիչներին ,նրանց երկերի ամփոփ բովանդակությունը

4.արժևորել Խորենացու դերը հայ պատմագրության և գրականության մեջ

5.ամրապնդել սերը սեփական պատմության նկատմամբ

Թեման սկսել եմ Մխիթար Անեցու խոսքով.

«Պատմությունը մարդուն իմաստնացնում է,պատմությունը անպակաս գանձ է մարդկանց համար,նա է ճարտարապետը և գիտություն սովորեցնողը,իմաստության առաջնորդը:Պատմությունը պետք է սովորել մանուկ հասակից,որպեսզի ճիշտ ուղիով ընթանա անհատի հետագա կյանքն ու զարգացումը:Պատմությունը մտավոր հոգի է,ով պատմություն չգիտի,նա մտավոր կույր է և ողջ կյանքում կխարխափի մթության մեջ»:

Քանի որ թեման աշակերտներին ծանոթ էր,ուսումնասիրել էին նաև 9-րդ դասարանում, առաջարկեցի կազմել պրիզմա «ՈՍԿԵԴԱՐ» բառով:Արդյունքում ստացան «ԱՐԺԵՔ» բառը և կազմեցին նախադասություն:Այն է՝

Հայոց մշակույթի ակունքները գալիս են Ոսկեդարից:



Այնուհետև աշակերտները բաժանվեցին խմբերի:11 հոգանոց դասարանը աշխատանքը իրականացրեց 3-4 հոգանոց խմբերով: Ամեն աշակերտ տանը ինքնուրույն կազմել էր ԳՈՒՍ աղյուսակ, և հետո միայն խմբային քննարկման արդյունքում ստեղծվեց խմբային ԳՈՒՍ-ը:



Աշխատանքն ավարտելուց հետո կատարվեց վերլուծություն և արդյունքն ամփոփվեց դիագրամի միջոցով:



Отформатировано: Шрифт:

Փավստոս Բուզանդ՝ 83%

Ագաթանգեղոս՝ 75%

Եղիշե,Փարպեցի՝ 62%

Հաջորդ աշխատանքը հետևյալ աղյուսակի կազմումն էր՝

Թեմայի հաջորդ նյութը Խորենացու կյանքն ու ստեղծագործությունը ուսումնասիրելն էր:

Դասը սկսվեց «Մտագրոհ»-ով:Ապա աշակերտները կազմեցին «Պատմություն Հայոց»-ի կառուցվածքը ներկայացնող «ԾԱՌ»-ը;



Աշակերտները ներկայացրին առասպելը՝որպես գրական տեսակ:Հետո աշակերտներին տրվեցին առասպելներից հատվածներ ,նրանք պետք է գուշակեին ,թե որ առասպելից է տրված հատվածը:

Առաջին դասի ավարտին հանձնարարվեց տնային աշխատանք՝ գրել շարադրություն՝«Ի՞նչ են սովորեցնում մեզ վիպական հերոսները/ Հայկ,Արամ,Արա Գեղեցիկ,Տիգրան» վերնագրով:

Հաջորդ դասաժամին աշակերտները ներկայացրին իրենց շարադրությունները:Ապա կազմեցին հետևյալ աղյուսակը՝

ՀԱՅՐԵՆԱՍԵՐ ՀԵՐՈՍՆԵՐ	ՆՎԱՃՈՂՆԵՐ

Отформатировано: Шрифт: Sylfaen

Կազմվեց նաև Վենի դիագրամ,որով համեմատվեցին Հայկը և Բելը:Կազմակերպվեց դերախաղ:Աշակերտները ներկայացրին «Արտաշես և Սաթենիկ» վիպերգը:

Աշակերտներին հանձնարարվեց ինքնուրույն տեղեկատվություն հավաքել և հանդես գալ հաղորդումներով:

Հանձնարարականներ՝

1.Ընդհանուր տեղեկություններ նկարների և արձանների մասին

2.Վարդանանք/ Խանջյան/

3.Վարդան Մամիկոնյանի հեծյալ արձանը Երևանում/Երվանդ Քոչար/

4.Հայկի արձանը Երևանում/Կառլեն Նուրիջանյան/

5Մաշտոցի արձանը Երևանում/Մատենադարանի հարակից հրապարակ/

6.Խորենացու արձանը Երևանում/Մատենադարանի հարակից հրապարակ/

7.Կորյունի արձանը Երևանում/Մատենադարանի հարակից հրապարակ/

Աշխատանքներն ավարտելուց հետո «Խորենացի» թեման ամփոփվեց հետևյալ թեստով՝

1.Ի՞նչ գիտությունների ուսումնասիրության մեջ է խորացել Խորենացին./1միավոր/

2.Ի՞նչ պատմական ժամանակահատված են ընդգրկում «Հայոց պատմության»՝ /1,5մ./

ա/1-ին գիրքը----------

բ/2-րդ գիրքը---------- գ/3-րդ գիրքը----------3.Նշված հնագույն մշակույթներից ո՞րի հետևորդն էր Խորենացին./1միավոր/

ա/պարսկական

բ/ասորական

գ/հունական

դ/ասուրաբաբելական

4.Ո՞ւմ մասին է գրել Խորենացին ./0,5միավոր/

«...շատ բաներ բերեց մեր աշխարհին այս----------,որ գունեղ երեսով էր և քաղցր նայվածքով,վայելչակազմ էր և թիկնեղ....:

5.«Ողբ»-ով Խորենացին հայ գրականության ո՞ր ժանրի հիմքն է դնում./1միավոր/

6.Նշվածներից ո՞րը Խորենացու երկի առանձնահատկությունը չէ./1միավոր/

ա/Հայ մատենագրության առաջին հուշարձանն է,որն ընդգրկում է հայ ժողովրդի ամբողջական պատմությունը՝ազգի կազմավորումից մինչև հեղինակի ապրած ժամանակները:

բ/Բացի հայ հին բանահյուսական ստեղծագործություններից ,օգտագործում է նաև բազմաթիվ և բազմալեզու գրավոր աղբյուրներ,որոնց մեծ մասը հիշատակում է անուններով:

գ/ Մատյանը Պատմահոր կողմից քննական պատմություն ստեղծելու առաջին փորձը չէ:

7.Ինչի՞ մասին է պատմվում «Հայոց պատմության» երկրորդ գրքում./1միավոր/

8.Ո՞ր տեսակետն է սխալ Խորենացու «Հայոց պատմության» վերաբերյալ./1միավոր/

ա/Սկզբնաղբյուր է հայ պատմագրության համար:

բ/ Հայաստանին առնչվող երկրների պատմությունն է:

գ/Համաշխարհային գիտության ուսումնասիրության աղբյուր է:

դ/Մեր նախնիների անիմաստասեր փառքի փառաբանությունն է:

9.Գրել շարադրություն՝«Ինչպիսի՞ն կուզենար տեսնել Խորենացին իր ազգի ապագան» վերնագրով»/2միավոր/

Գրավոր աշխատանքի վերլուծությամբ պարզ դարձավ,որ աշակերտները լավ են յուրացրել թեման:11 աշակերտից 3-ը ստացել են «9»-ը,4-ը՝«8»,2-ը՝«7»,1-ը ՝«6»,1-ը«5»:

Եթե նշենք %-ներով,կլինի հետևյալ պատկերը՝ առաջադիմություն՝100%, որակ՝81%:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Նորանկախ Հայաստանում կրթության բնագավառի բարեփոխումները և ուսուցչի դերի փոփոխությունը դարձան առաջնային:Այսօրվա ուսուցիչը պետք է հանդես գա ոչ թե որպես նոր գաղափարների,մեթոդների,մոտեցումների ամրապնդող,այլ դրանք հիմնավորող,դատող մասնագետ:Արդի ժամանակաշրջանում աշակերտների պահանջմունքները բավականին մեծ են,ուստի համագործակցային ուսուցմամբ հնարավոր է հետաքրքիր կազմակերպել ուսուցման գործընթացը:Առավել շատ մեթոդների կիրառումը դասը կդարձնի բովանդակային և արդյունավետ:Աշխատանքները կատարելիս մեծ ոգևորություն զգացի սովորողների շրջանում:Քանի որ թեման հայրենիքի պատմության հետ էր կապված,աշակերտները ավելի հաճույքով կատարեցին աշխատանքները:Իրոք,հայրենասիրությունը սկիզբ է առնում մարդու դաստիարակությունից:Այն կախված է շրջապատի և ազգի հանդեպ ունեցած վերաբերմունքից:Հայրենիքի նկատմամբ սերը վառ զույներ է ստանում ,երբ ճանաչում ենք այն:Ճիշտ է ասված.«Ով չի ճանաչում իր հայրենիքը,չի կարող ճշտապես սիրել այն»:

Կարծում եմ ,որ հայոց պատմության բազում էջեր դեռևս կարոտ են ուսումնասիրության:

ՀԱՎԵԼՎԱԾ

Օրվա դասի պլան /1/

Դասարանը՝ 5-րդ

Դասի թեման՝ Ա.Պարսամյան« Մեր լավաշ հացը»:Տրամաբանական շեշտ

Դասի նպատակները՝

ա/ակադեմիական

1.իմանա բանաստեղծության արտահայտած հիմնական գաղափարը

2.ընկալի բանաստեղծական խոսքը

3.հասկանա տրամաբանական շեշտի կարևորությունը խոսքում

բ/ սոցիալական

1.համագործակցելու կարողություն

2.դիմացինին լսելու ,գնահատելու,ինքնագնահատելու կարողություն

Անհրաժեշտ պարագաներ՝ գիրք,տետր,գրատախտակ,կավիճ և այլն

Ցուցադրական նյութեր՝ ցորենի հասկ,ալյուր,գրտնակ,լավաշ,նկարներ,պաստառներ

Հիմնական հասկացություններ՝ լավաշ,չափածո խոսք,բանաստեղծության կառուցվածք,ավանդություններ,տրամաբանական շեշտ,բառային շեշտ

ԴԱՍԻ ԸՆԹԱՑՔԸ

Խթանման փուլ

Փուլը ներառում է տնային առաջադրանքի ստուգում:

Կկազմակերպվի մտքերի տարափ:Կառանձնացվեն այն բառերը,որոնք անծանոթ են երեխաներին

Իմաստի ընկալման փուլ

Առանձնացված բառերը կենթարկվեն բառակազմական վերլուծության:Կկազմվեն զույգեր,որոնք կկատարեն տեքստային աշխատանքներ

Կշռադատման ,գնահատման փուլ

Այս փուլում կկիրառվի «Քառաբաժան» մեթոդը.ի՞նչ գիտեի,ի՞նչ իմացա,ի՞նչ եզրակացություններ արեցի,ինչպե՞ս կարող եմ կիրառել

Տնային հանձնարարություն՝ գրել շուտասելուկներ,բառախաղեր

Օրվա դասի պլան/2/

Դասարանը՝7-րդ

Դասի թեման՝«Թվականը՝ որպես խոսքի մաս»

Դասի նպատակները՝

ա/ակադեմիական

1.իմանա թվականի արտահայտած ընդհանուր իմաստը

2. տարբերի թվականը այլ խոսքի մասերից

3.տեքստից դուրս գրի թվականները

բ/սոցիալական

1.խմբում աշխատելու կարողության ձևավորում

2.սեփական գիտելիքները արժևորելու կարողություն

Հիմնական հասկացություններ՝ ընդհանուր իմաստ,ձևաբանական առանձնահատկություն,չթեքվող խոսքի մաս,ասացվածքների փոխաբերական իմաստներ

Դասի ընթացքը

Խթանման փուլ

Տնային աշխատանքների ստուգումից հետո դասարանը կբաժանվի խմբերի:Յուրաքանչյուր խմբի կտրվի հանձնարարություն

Իմաստի ընկալման փուլ

Այս փուլում կլրացվի Վենի դիագրամ,որով նոր և անցած գիտելիքների համադրումը և յուրաքանչյուրին բնորոշ առանձնահատկությունների ընկալումը:

Կշռադատման փուլ

Խմբերին կտրվեն ասացվածքներ:Աշակերտները կգտնեն թվականները նկբացատրեն դրանց գործածության կարևորությունը խոսքում:Կբացատրեն ասացվածքների իմաստները;

Տնային աշխատանք

Դպրոցական տարբեր առարկաների դասագրքերից գրել նախադասություններ,որոնք կպարունակեն թվականներ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1.«Հայոց լեզու և գրականություն»գիտամեթոդական ամսագիր,2012թ.

2.Հովհաննիսյան Ա.,Հարությունյան Կ.,Խրիմյան Մ.,Խաչատրյան Ս.,Բայաթյան Ն.,Ալեքսանյան Լ. «Համագործակցային ուսուցում/«Անտարես» ,2006թ.

3.«Համագործակցության մանկավարժություն»/Վ.Շատարով և ուրիշներ/

4Վ,Հարությունյան,Լ.Մարկոսյան,Մ.Հովսեփյան «Հայ գրականություն» ուսումնաօժանդակ ձեռնարկ,2011թ.

5.Հանրագիտարան